*մանել գրոյն առ ռամիկ այն շունն կատաղի, իսկոյն[1] փութով առաքեաց ը՟ քուրթ, զի սպանցեն զհայրապ՟տն։ Աստանօր լամ զաղէտալի[2] տես կ՟թկոսին իմոյ. զի նա միամտուե՟բ ճաշակէր [զճաշ երեկոյեանն. ունէր զպատառն ի գերունակ աջոյն, իսկոյն հար*

*ին*

**53.** *ին հրացանաւ ի գլուխ գերունակ երջանկին. հեղաւ արիւն ի մէջ սեննակին. լցաւ տունն ծխով և մառախլով և խաւար կալաւ զմեզ. մինչ աւանդեաց զհոգին. մնաց պատառն ի մէնջ[5] ձեռին. եղև սուք մեծ հայոց ազգին։*

*Յետոյ բռնուե՟բ օծեցին զյոհաննէս արքեպ՟ս կ՟թկոս յաղթամարու՝ ո՛չ իւր կամօվք, այլ ակամա. իսկ[4] նա ասէր.[5] ո՛չ կամիմ հայրապ՟տուի՟ առնել ի վ՟ր պիրտ և սորա ազգին հայոց. այլ յուժ[6] աղաչէին իշխանքն հայոց. և իբրև տեսին ոչ կարացին հաւանեցուցանել ողոքական բանիւք. յայժամ (= յայնժամ) գնացին առ ազգն մարաց. բողոքեցին յականջս իշխանաց ն՟յ,[7] և ապա բռնու՟բ օծեցին[8] զՏ՟ր յոհան կ՟թկոս, և ի պատահել անպիտան դազարիս ի գերահրաշ[9] աթոռն գազկայ։ Արդ ի նախերգանին ծանուցի ձեզ, այժմ ես ծանուցանեմ. երկու հատոր էր գրքուկս, առաջին ի Թագաւորէն մինչև ցտ՟ր զաքարիայն որ նահատակեցաւ*

*ի սստ*

---

1 Զ. իսկոյ.
2 Զ. զաղեցլի (*տողադարձ՝* զաղեs-լի).
3 *ուղղելի* ի մեջ.
4 Զ. իսկս.
5 Զ. *տղմ.*
6 Զ. *լուսանցքում.*
7 Զ. *տղմ.*
8 Զ. օծեցեցին.
9 Զ. անր *տղմ.*